ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ը/40/1436-23 առ «10» 07 2023թ.

«Մեդիսար» ՍՊԸ
տնօրեն
Մ. Գաբրիելյանին

(№ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-02/23-01/051 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար իոնափոխարկիչ խեժերի՝ կատիոնիտի և անիոնիտի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-02/23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 21-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-02/23-01/051 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից մինչև 01.05.2023թ.»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն (հիմք՝ պատասխանատու ստորաբաժանման ս/թ հուլիսի 10-ի թիվ 3522 զեկուցագիր):

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:
- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 21-ին կնքված №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-02/23-01/051 պայմանագիրը, և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91